



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր՝ Ա.Դազարյան

Վարչական գործ թիվ ՎԴ-5/0546/05/09



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

« 14 » փետրվարի 2014թ.

ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
հետևյալ կազմով՝ (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան)

<i>նախագահող դատավոր՝</i>	Արթուր Առաքելյան
<i>դատավոր՝</i>	Աշոտ Աբովյան
<i>դատավոր՝</i>	Գալուստ Դարիբյան

*մասնակցությամբ՝ հայցվոր Արևհատ Պողոսյանի
հայցվորների ներկայացուցիչ Սուսաննա Մխիթարյանի
պատասխանողի ներկայացուցիչ Կարեն Խաչատրյանի
երրորդ անձանց ներկայացուցիչներ Գեղամ Բաղդասարյանի,
Գագիկ Հարությունյանի, Իշխան Վանոյանի*

քննելով Ա.Գալոյանի, Ֆ.Սարգսյանի իրավահաջորդի լիազորված անձ՝ Ա.Պողոսյանի, Վ.Պողոսյանի իրավահաջորդ՝ Ա.Պողոսյանի, Գ.Պողոսյանի, Հ.Գալոյանի բերած վերաքննիչ բողոքն՝ ըստ հայցի Ֆելիքս Սարգսյանի իրավահաջորդ Լաուրա Սարգսյանի, Գոռ Պողոսյանի, Վաղինակ Պողոսյանի իրավահաջորդ Արևհատ Պողոսյանի, Հովսեփ և Անդրանիկ Գալոյանների ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային ստորաբաժանման /երրորդ անձինք՝ ՀՀ Շիրակի մարզպետարան, «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվ/ պետական գրանցման միասնական 1-2 մատյանի թիվ 000002 համարի տակ 15.04.2002 թվականին Մարզպետարանի սեփականության իրավունքի գրանցումը մասնակի՝ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շինության մասով, անվավեր ճանաչելու և որպես անվավերության հետևանք Մարզպետարանի և Համալսարանի միջև 23.04.2002 թվականին կնքված նվիրաբերության պայմանագիրը մասնակի՝ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350 քմ մակերեսով բնակելի շենքի մասով, անվավեր ճանաչելու և Գյումրու Տիգրան Մեծի պողոտա թիվ 1 հասցեով «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբերատիվի՝ 02.05.2002 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի՝ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ կապի նախարարությանը թողնված 350 քմ

մակերեսով բնակելի շինության մասով, անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ՎՂ-5/0546/05/09 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 27.03.2013թ. վճռի դեմ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր՝ Էդ.Նահապետյան) 2009 թվականի մայիսի 8-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2009 թվականի հուլիսի 16-ի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատաքննության:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2010 թվականի ապրիլի 21-ի որոշմամբ վարչական գործի քննությունը վերսկսվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2010 թվականի մայիսի 18-ի վճռով հայցը մերժվել է:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի հուլիսի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքի մասը վերադարձվել է:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակի և գործն ուղղարկվել է ՀՀ վարչական դատարան նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (դատավոր՝ Ա.Ղազարյան) 2011 թվականի հունվարի 17-ի որոշմամբ գործի նոր քննության վարույթ է հարուցվել և նշանակվել է նախնական դատական նիստ:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ դատական նիստերին կողմի պարտադիր մասնակցությունն ապահովվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի մարտի 14-ի որոշմամբ վարչական գործի քննությունը վերսկսվել է:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2012 թվականի հունվարի 27-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ Սուրիկ Ա.Գալոյանը, Ֆ.Սարգսյանի իրավահաջորդի լիազորված անձ՝ Ա.Պողոսյանը, Վ.Պողոսյանի իրավահաջորդ՝ Ա.Պողոսյանը, Գ.Պողոսյանը, Հ.Գալոյանը 2013 թվականի ապրիլի 26-ի փոստային առաքմամբ բերել են վերաքննիչ բողոք:

Թիվ ՎՂ-5/0546/05/09 վարչական գործը Վերաքննիչ դատարան է ստացվել 17.05.2013թ. և նույն օրը հանձնվել է դատական կազմին:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի մայիսի 21-ի որոշմամբ պետական տուրքի վճարումից ազատվել է և վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հունիսի 1-ի որոշմամբ «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբեռատիվի ներկայացուցիչ Ի.Վանոյանի վերաքննիչ բողոքի պատասխանը վերադարձվել է:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 8-ի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի որոշմամբ գործի քննությունը վերսկսվել է:

Վերաքննիչ դատարանին է ներկայացվել «Պրոգրես համալսարան» արտադրական կոդաբեռատիվի ներկայացուցիչ Ի.Վանոյանի վերաքննիչ բողոքի պատասխանը:

2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցը վարչական դատարանը մերժել է 18.05.2010 թվականի վճռով:

